

ծաթեալ և ոսկեջրած պատկերներով։ Պահարանի լիտեկի փայտի վրայի գրուածքից երևում է, որ պահարանը շինել է տուել Բարսեղ եպիսկոպոսը։

6) Մասն սր. նշանի, որ գրուած է ականակուռ խաչի մէջ, իսկ խաչը գրուած է վերոլիշեալ աւետարանաձև պահարանի մէջ՝ Առեկաս Աւետարանչի ծնօտի հետ։

7) Սր. Աստուածածնալ մազը և զգեստի կտորը. գըրուած են գեղեցիկ, ականակուռ խաչի մէջ. խաչն էլ դրուած է աւետարանաձև պահարանի մէջ, որ շինուած է արծաթից և ոսկեզօծ է։ Պահարանի վրայ գրուած լիշտակարանից երևում է, որ այս մասունքն ու պահարանը վանքին ընծալել է Յօվսէփի արքեպիսկոպոս Արդութեանցը։

Բացի լիշեալ նշանաւոր մասունքներից կան նոև բազմաթիւ արծաթեալ մեծ ու փոքր խաչեր, բուրվառներ, որոնք համարեա բոլորն էլ վերջին դարերի գործ են և պատրաստուած Ռուսաստանում, ինչպէս երևում է նրանցից շատերի վրայ եղող սլաւոնական գրերից. այդպիսի կազմ ունի և այն մեծագիր աւետարանը, որի լիշտակարանից իմանում ենք, որ Յօվսէփի արքեպիսկոպոս Արդութեանի անձնական գործածութեան համար է եղել. «ի վայելումն անձին իւրոյ—1217 թուին (1768)։

## IX.

### ՎԱՆՔԻ ԶԵՐԱԳԻՒՄՆԵՐԸ

1) Աւետարան. փոքրիկ գիրքով, արծաթեալ կազմով, նկարներով զարդարուած և Յիսուսի կեանքից առնուած պատկերներով. բոլորագիր մանր տառերով գրուած է նուրբ մագաղաթի վրայ. Ձեռագրի մի երեսի վրայ մանր տառերով գրուած է. «... Մոնի Աղէքսանդրացւոյ բազմաշխատութեամբ եթող մեզ զաւետարան Մատթէոսեան զհամարարրառս ալլոց աւետարանչացն զգրուագս եղեալ առ ընթեր միմեանց որպէս զի հարկէ դիպեալ շարից կարգեցից և ապականէր».

որչափ ըստ միու յարընթերցուածոլու, այլ զի ողջանդամ և զայլոցն ևս բնաւ զմարմնոյ և զշարի ունիցիս գիտել զանձն լիւրսն ըստ իւրաքանչիւր աւետարանի և ի տեղի լորս նորքիմբ ածեան ասել ճշմարտութեամբ և աշխատափրութենէ....։ Այս լիշտակարանի սկիզբն ու վերջը չկայ։

Զեռագրի վերջը կայ մի ուրիշ լիշտակարան, որից երեւում է, որ աւետարանը գրուած է Առւկաս սարկաւագի ձեռքով Հալոց Ռենիլ (1621—1672) թուին, Թակոր Զուդայեցու կաթողիկոսութեան ժամանակ Սիւնեաց երկրի Բագարչայ գիւղում, Պարսից Նահ.Սուլէման փոքրի օրով։ Նարունակութեան մէջ տառւած է նոյնպէս հետեւեալը։

«Լան բազում մեղաց մերոց մարախն եկն ի տաւնս Ղափանայ և Սիւնեաց և ի տեղիս տեղիս աւերութիւնս արար վասն տնթիւ մեղաց մերոց և ձու իւր տմբարեաց երեսս երկրի. մեր ոչ գիտացինք զինչ լինելոց է այն Աստուծոյ է գիտելի. ինքն Քրիստոս ողորմեսցի ստեղծուածոց իւրոց և նմա փառք յաւիտեանս տմէն։ Ապրիլի իդ (24) աւարտեցաւ։

2) Աւետարան. փոքր գիրքով, արծաթեալ սոկեզօծ կադմի մէջ, գրուած է նուրբ մագաղաթի վրայ՝ գեղեցիկ համահաւասար գրերով։ Զեռագիրը պատկերագարդ է. սկզբումը կան տասներկու գունաւոր և սոկեզօծ նկարներ. իւրաքանչիւր աւետարանի սկզբումն էլ նկարուած է համապատասխան աւետարանչի պատկերը։

Զեռագրի սկզբումն օտար գրչով գրուած է. «Լասն Հասանի իշխանագնեայ Տեառն Յօվսէփ առաքելոյ շաւիդ արքեպիփուառոսի և առաջնորդի ազդիս Հալոց որք են ընդ թշնանութեամբ մեծի Ըստուաց և Հոռոմոււ։»

Կոյ դարձեալ մի այլ օտար ձեռքով գրուած լիշտակարան, որի սկիզբը պակաս է և բովանդակութիւնը հետեւեալն է. «...Որ զպտուղ բարեպաշտութեան արարեալ է զայս զեղեցկանկար սուրբ աւետարաննս և ետ ընծայ առ սուրբ Հոգի եկեղեցիս Հալոց յԱմստերդամալ, լիշտակի իւրն և զիւր ննջեցեալ ծնողաց հօրն Եսաւեալ և մօրն Մետիսին և կենագանի եղբարցն Սահակին, Թումաննիսին, Մկրտչին

և քեռն Եղիսաբէթին և որք միանգամ Հայր մերիւ ողօրմի ասացողացդ ինքն Քրիստոս ողօրմեսցի աստ և ի հանգեր-ձեալն ըստ մեծի ողօրմութեան իւրում, ամէն։ Ի թուոյ Փրկչի 1759 և ամսեան դեկտեմբերի 6 գրեցաւ ի քաղաքն Ամստերդամ։

Զեռագրի վերջը կալ նոյնպէս մի ուրիշ լիշատակարան հետեւալ բովանդակութեամբ։

«Գրեցաւ սր. աւետարանս ի Կօստանդնուպօլիս թվին Հայոց ՌԴԿ (1093—1644) լիշատակ Խօջա մահտեսի ծառու-ըին և ծնողացն իւրոց Մալինին և Հոփիսիմէին և կողակ-ցին Ղադամզութլու և որդւոցն իւրոց Բանթումտոցին, Գա-լստին և Պետրոսին. գարձեալ լիշեցէք զմահտեսի Ծատուրն որ ետ զսուրբ աւետարանս Նոր-Զուղայու սր. Աստուածա-ծին եկեղեցւոյն լիշատակ իւր և հանգուցեալ իւրոյ Բարա-դամին, որ մանուկ տիօք հանգեաւ ի Տէր, որոյ հոգին հան-գուցէ Տէր ի գասս ընտրելոցն. ամէն. գարձեալ լիշեցէք ի Քրիստոս զնորոգող սրբոյ աւետարանի ի թվին մերոյ ՌԴԿԸ (1191—1742) զաւագ երէցն Տէր Յովսէփն... լիշելով գար-ձեալ մի շարք քահանաների անուններ, շարունակում է. «և միւս Տէր-Սարգիս Վանեցիս, որ եմս կարգող սրբոյ գըր-քիս և գուք լիշեալ լիջիք ի Քրիստոսէ Սստուծոյ մերմէ. ամէն»։

Վերջին լիշատակարանի պարունակութիւնն է.

«Վերստին ստացայ զար. աւետարանս այս և նուիրեցի ի գուռն Սանահնու սր. Աստուածածին վանիցն իմոց հալ-ընեաց ի լիշատակ մարմնաւոր ծնողաց, ի Տէր հանգուցեալ Սանահնեցի Երկալնարագուկ Արզութեանց Նեօշ բէզին և պարկեշտագնաց Քեթեանին և եղբարցս Մովսէս բէզին, Բէ-ժան բէզին և Փարստանին, քերցս և ամենայն զաւակաց նոցա. Յովսէփ արքեպիսկոպոս Ռուսաց երկրի եղեալ ամե-նալն Հայոց ազգին և հիմնագիր Նոր-Նախիչևանու և Գրի-գորուալու քաղաքացն Հայոց յամի Փրկչին ի 1793, իսկ Հայոց ի ՌՄԽԲ (1242) յուլիս ամսոյ ի 5-ն ի Մոսկով քա-ղաք։»

3) Աւետարան. մեծ դիրքով, մագաղաթի վրայ գրուած.  
թէ սկզբում և թէ վերջում լիշտատկարաններ ունի, որոն  
ցից երևում է, որ աւետարանը գրել է Ստեփաննոս վար-  
դապետը և ընծալել Սանահնի վանքի որ. Աստուածածին  
եկեղեցուն. նուէրն ընդունել է որ. Աստուածածինի փակա-  
կալ և սպասաւոր Յովհաննէս վարդապետը հալոց Զթ. (909 —  
1460) թուին:

Այս ձեռագրի մէջ կան նաև վանքին ընծալուած զա-  
նազն կալուածների մասին տեղեկութիւններ և կալուած-  
ների վաճառման վկայաթղթեր:

Ահա այս է Սանահնի վանքի ձեռագրների բոլոր հա-  
րստութիւնը... : Այն վանքի, որի քարաշէն ու քանդակա-  
գործ գարաններում հարիւրաւոր և գուցէ նաև հազարաւոր  
ձեռագրներ էին շարուած, որի շրջակայ անմատչելի քարա-  
ժայսերից անգամ քարացած ձեռագրների կապոցներ հան-  
ուեցան....

Ինչ որ անկնաս էր թողել վայրենի ազգերի բռնակա-  
լութիւնն ու լավշտակութիւնը, այն էլ ոչնչացրեց մեր խո-  
րին, անլատակ տգիտութիւնը....

